

VIOLENCE Conjugale



Pour une Planète sans Frontières

Հանուն իրազեկվելու և իրազեկված լինելու իրավունքի պաշտպանության

-Ի՞նչ է նշանակում ընտանեկան բռնություն:

Այն ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական բռնարարք է գուզընկերների կամ ամուսինների միջև (անկախ նրանից, ամուսնությունը փաստացի է թե գրանցված): Ֆրանսիական օրենսդրության համաձայն ընտանիքում բոլոր տեսակի բռնություններն **ԱՐԳԵԼՎԱԾ ԵՆ:**

Ընտանեկան բռնության դեմ առկա պաշտպանիչ միջոցները կիրառելի են ինչպես ամուսինների, այնպես էլ երեխաների նկատմամբ, ովքեր բռնության զոհ են:

Ընտանեկան բռնության տեսակները:

- Հոգեբանական և խոսքային բռնություն (դրանք են սպառնալիքները, նվաստացնող և վիրավորական խոսքերը, վիրավորանքները, ոտնձգությունները՝ քրեական օրենսգրքի 222 հոդվածի 7-ից մինչև 33- հոդվածի 2-2 մասերի համաձայն) :
- Սեռական բռնություն (դրանք բռնի սեռական գործողության դեպքերն են քրեական օրենսգրքի հետևյալ հոդվածի մասերով՝ 222-22, 222-22-2, 222-2; 222-26 և 222-27-ից մինչև 222-31) :
- Ֆիզիկական բռնություն (ծեծը և վնասվածք հասցնելը՝ քրեական օրենսգրքի 222-7-ից մինչև 222-16-3) :
- Տնտեսական բռնություն (եթե ամուսիններից որևէ մեկը ենթարկվե է տնտեսական կախվածության) :

Անհրաժեշտ է նշել, որ ընտանեկան բռնություն է համարվում նաև ամուսնական հարաբերությունների խզումից հետո կատարված բոլոր բռնարարքները:

VIOLENCE Conjugale

-Ես ընտանեկան բռնության զոհ եմ, ու՞մ կարող եմ դիմել:

Ընտանեկան բռնության դեպքերում անհրաժեշտ է դիմել ոստիկանություն, հավաքելով՝

17 կամ **112** հեռախոսահամարը կամ հաղորդագրություն ուղարկել՝ **144 հեռախոսահամարին** (անվճար ծառայություն): Եթե անհետաձգելիության խնդիր չկա, հնարավոր է դիմել ոստիկանության բաժանմունք կամ ժանդարմերիայի բրիգադ:

-Ես ընտանեկան բռնության զոհ եմ և կարիք ունեմ բժշկական օգնության, ու՞մ կարող եմ դիմել:

Եթե ընտանեկան բռնության հետևանքով ֆիզիկական վնասվածքներ կամ հոգեբանական խնդիրներ են առաջացել, անհրաժեշտ է անհապաղ դիմել բժշկական ծառայությունների միջամտությանը:



Բժշկական օգնության անհետաձգելի դեպքերում անհրաժեշտ է զանգահարել **15** հեռախոսահամարով (SAMU) իսկ կենցաղային պատահարների դեպքում (հրդեհ, պայթյուն) զանգահարել **18** (Pompiers) հեռախոսահամարով :

-Ինչպե՞ս վարվել, եթե զուգընկերս լրտեսում է իմ բջջային հեռախոսագանգերը և հաղորդագրությունները:

Ոստիկանությունը մշակել է էլփոստի հաղորդագրությունների համակարգ, որը հասանելի է <https://www.service-public.fr/cmi> կայքի

միջոցով, այն թույլ է տալիս ցանկացած պահի ջնջել ուղարկված հաղորդագրությունները:

Ի՞նչ իրավական միջոցներ են գործում բռնարարքի դեպքում

1. Եթե ընտանեկան բռնարարքի զոհը, ինչպես նաև բռնարարքի հեղինակը գտնվում են միևնույն վայրում (բնակավայր), ապա այս դեպքում զոհը կարող է լքել իր բնակավայրը և զգուշացնել իրավապահ մարմիններին՝ իր նկատմամբ կատարված բռնարարքի մասին :
2. Ֆրանսիայում գոյություն ունեն հատուկ վայրեր, ինչպիսիք են արտակարգ դեպքերի համար նախատեսված ընդունելության կենտրոնները, որոնք աջակցում են իրենց բնակավայրը լքած ընտանեկան բռնության զոհերին: Դրանից օգտվելու համար անհրաժեշտ է հավաքել **115 անվճար հեռախոսահամարը (Samu) :**

VIOLENCE Conjugale

3. Ֆրանսիայում գործում է նաև հատուկ ծառայություն, որը մասնագիտացված է կանանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերի համար (հեռախոսահամարը՝ 3919) կամ դիմել «**France Victime**» **ցանցի ասոցիացիային (116006 հեռախոսահամարով)**:
4. Չոհին օգնություն ցուցաբերելու համար կարևոր է ընտանեկան բռնության արդյունքում ստացված վնասվածքների փաստացի արձանագրումը բժշկական անձնակազմի կողմից, որի համար անհրաժեշտ է դիմել բուժօժանայություններին:

Պաշտպանվելու ի՞նչ միջոցներ կան

Ֆրանսիայում գոյություն ունեն քրեական և քաղաքացիական պաշտպանության միջոցներ, ինչպես նաև **ծանր դեպքերի** համար նախատեսված **հեռախոսային ծառայություն**:

Քրեական պաշտպանության միջոցները ներառում են դատախազի կողմից ընտանեկան բռնության գոհի պաշտպանությանն ուղղված գործընթացներ:

- 1) **Ձեռնաշղթայի կիրառում**: Այն կիրառվում է ընտանեկան բռնության գոհի պաշտպանությունը բարելավելու համար, որը միտված է բռնարարը կիրառող անձին արգելելու ցանկացած ֆիզիկական շփում իր գոհի հետ (համաձայն հանրային անվտանգության մասին 2010թ հուլիսի 9-ի օրենքի) : Այս միջոցը ուժի մեջ կմտնի 2020թ ընթացքում, որը կոչված է նախագգուշացնել գոհին՝ ընտանեկան բռնության հեղինակի մոտակայքում գտնվելու փաստի մասին :
- 2) **Դատական հսկողություն իրականացնելու կարգը**: Դատախազն իրավասու է ընտանեկան բռնության հեղինակին դատական հսկողության տակ պահել, ներառյալ դատաբնության օրը :
- 3) **Նախնական կալանքի տակ վերցնելը**: Այս միջոցը կիրառելի է այն դեպքում, երբ բռնություն կատարող անձը չի կատարում գոհի պաշտպանությանն ուղղված իրեն պարտադրված միջոցները:

Քաղաքացիական պաշտպանության միջոցները ձեռնարկվում են Ընտանեկան հարցերով զբաղվող դատավորների կողմից, և ներառում են հետևյալ միջոցառումները.

- 1) **Պաշտպանությանն ուղղված որոշումներ**: Ընտանեկան գործերով զբաղվող դատավորը իրավասու է ճանաչել գոհի (և նրա երեխաների) պաշտպանությանն ուղղված անհետաձգելի միջոցների կիրառումը, օրինակ տեսակցության իրավունքը, ապրելատեղի, ինչպես նաև եկամուտների հատկացման իրավունքը:
- 2) **Պաշտպանված ուղեկցության միջոցը**: Այս միջոցը կիրառվում է Ընտանեկան գործերով զբաղվող դատավորին դիմելու դեպքում, երբ բռնարարը գործադրողն ու տուժողը հանդիպում են տեսակցության իրավունքով վերապահված վայրում:

VIOLENCE Conjugale

Ծանր դեպքերի համար նախատեսված հեռախոսային ծառայությունը կիրառվում է առավել լուրջ վտանգի պարագայում՝ ընտանեկան բռնության գոհ դարձած անձի անվտանգությունը ապահովելու համար: Համակարգը համարված է տազնապային ազդանշային կոճակով, որը թույլ է տալիս խոչընդոտել բռնարարը գործած անձի գործողությունները:

Ինչպե՞ս կարող եմ պաշտպանել իմ երեխաներին

Երեխաները նույնպես կարող են դառնալ ընտանեկան բռնության գոհ, անկախ գործադրված բռնության տեսակից: Անհրաժեշտ է իմանալ, որ ֆրանսիական օրենսդրության համաձայն այս առումով երեխաները համարվում են խոցելի խումբ: Մակայն Ֆրանսիայում մանկությունը պաշտպանված է բազմաթիվ կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են « Տեղեկատվության հավաքագրման հարցերով զբաղվող մարմին » / Cellule de recueil des Informations préoccupantes/ « Մանկությանն ուղղված սոցիալական օգնություն և երեխաների դատավորներ» /Aide Sociale à l’Enfance et les juges des enfants/ կազմակերպությունները:

Մանկության պաշտպանությունը համարվում է կրթական օժանդակության գործընթացի անբաժանելի մաս, քանի որ ընտանեկան բռնության պարագայում առաջնահերթ վտանգի են ենթարկվում երեխաները և նրանց իրավունքները: